



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՀՈՎԱՆԱԲՈՐԵՑ ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ
 ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ**

Հինգշաբթի, 17 Օգոստոսի երեկոյեան ժամը 8-ին, Կլենտլի Verdugo Hills Country Club սրահին մէջ, Հայ Ամերիկեան Տարեցներու Միութիւնը գեղարուեստական պատշաճ ծրագիրով մը նշեց միութեան 25-ամեակը, Հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Առաջնորդ Սրբազան հօր իբրեւ ներկայացուցիչը, Ազգ. Առաջանորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան ներկայ եղաւ հանդիսութեան ու փոխանցեց Առաջնորդ Սրբազանին բարեմաղթութիւնները: Ան նաեւ միութեան ներկայացուցիչներուն յանձնեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեան գիրը:

Հանդիսութեան ընթացքին կատարուեցաւ գնահատագիրներու տուչութիւն: Չեկուցաբերն էր միութեան վաստակաւոր անդամներէն Տիար Յակոբ Օվայեան: Ելոյթ ունեցաւ «Երամ» պարախումբը, ղեկավարութեամբ Արփի Օվայեանի: Մանկապատանեկան երգչախումբը հրամցուց քանի մը երգեր, ղեկավարութեամբ Տիար Արիկ Գեորգեանի:

Յայտնենք, որ Միութեան երկրորդ ձեռնարկը ճաշկերոյթ պարահանդեսը, որ կազմակերպուած է նոյն նպատակով, տեղի պիտի ունենայ յառաջիկայ Կիրակի, Օգոստոս 27-ին, կ.ե. ժամը 5-ին: Պիտի կատարուի մոմավառութիւն, պարտամուրհակի հրկիզում:

**25TH ANNIVERSARY OF THE ARMENIAN-AMERICAN
 COUNCIL ON AGING, UNDER THE AUSPICES OF THE PRELATE**

On Thursday, August 17, the Armenian-American Council on Aging celebrated its 25th anniversary with the first of two events it has planned for this occasion.

The cultural program took place under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at the Verdugo Hills Country Club. Very Rev. Fr. Muron Aznikian, Co-Director of the Prelacy Christian Education Department, represented the Prelate and conveyed his best wishes. He also presented the message and the blessings of His Holiness Aram I, Catholicos of the Holy See of Cilicia.

During the event, at which Mr. Hagop Ovayan was the keynote speaker, certificates of appreciation were handed out. There were also performances by the "Yeram" dance group, headed by Arpi Ovayan, and a youth choir headed by Arig Kevorkian.

The Council's second event is a dinner banquet to take place on Sunday, August 27, at 5:00 p.m., also at Verdugo Hills Country Club. There will be a candle-lighting ceremony and mortgage burning.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԿԸ ՀՈԿԱՆԱԴՈՐԷ ՏՈՔԹ. ԱԼՖՐԷՏ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ՆՈՐ ՀԱՏՈՐԻՆ ՇՆՈՐՀԱՅՐԱՆԴԵՍԸ

Բարձր հովանաւորութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հօր, Կիրակի, Օգոստոս 20-ին, երեկոյեան ժամը 6-ին, եւ կազմակերպութեամբ Լուս Անճելըսի Իրանահայ Միութեան, տեղի պիտի ունենայ շնորհահանդեսը Տոքթ. Ալֆրետ Դանիելեանի անգլերէն-հայերէն բժշկական բացատրական առձեռն բառարանի երկրորդ հատորին, որ լոյս տեսած է վերջերս:

Ձեռնարկը տեղի պիտի ունենայ միութեան կեդրոնին մէջ, Կլէստէյլ:

PRESENTATION OF DR. ALFRED DANIELIAN'S MEDICAL DICTIONARY, UNDER THE AUSPICES OF THE PRELATE

On Sunday, August 20, the Armenian Society of Los Angeles has organized a presentation of the second volume of Dr. Alfred Danielian's English-Armenian medical dictionary. The event, held under the auspices of the Prelate, will take place at the hall of the Armenian Society of Los Angeles in Glendale.

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՏՕՆԻՆ ՅԱՏՈՒԿ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ՔՈՐՈՆԱՅԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ

Կիրակի, Օգոստոս 27-ին, կ.ե. ժամը 2-ին, Քորոնայի մեր ծխական համայնքը յատուկ արարողութեամբ պիտի նշէ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը:

Առաջնորդ Սրբազան հօր տնօրինումով, Անդաստանի եւ Խաղողորհներքի արարողութիւնը պիտի կատարէ եւ յաւուր պատշաճի քարոզէ Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Թաշճեան:

Արարողութիւնները տեղի պիտի ունենան ղըպտիներու Ս. Էնթընի եւ Ս. Ապանուպ եկեղեցւոյ մէջ, 2345 Fifth St., Norco.

BLESSING OF GRAPES AT THE CORONA PARISH

On Sunday, August 27, the Armenian Apostolic Church of Corona, Riverside County, will celebrate the Feast of the Assumption of the Holy Virgin with special ceremonies and the blessing of grapes.

Under the auspices of the Prelate, Rev. Fr. Mesrob Tashjian will conduct the traditional ceremony of *Antasdan*, deliver the sermon, and officiate at the blessing of the grapes.

Services will begin at 2:00 p.m. at St. Anthony and St. Abanoub Coptic Orthodox Church located at 2345 Fifth St. in Norco.